

ԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՇՈՐՁ

Ա. Ս. ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

Արաբների կողմից Հայաստանի նվաճման հարցը հետազոտելիս ու թվագրելիս ուսումնասիրողները հարկ եղածի չափ ուշադրություն չեն դարձրել սկզբնաղբյուրների մի քանի էական հաղորդումների, ուստի, մեր կարծիքով, առկա է տարեթվային անճշտություն: Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարել լրացուցիչ ուսումնասիրությամբ անդրադառնալ հարցին:

Հարցի քննությունը կարիք ունի մի համառոտ պատմական ակնարկի: Երբ Արաբական խալիֆայության գահին բազմեց Աբդ ալ-Մալիքը (684-705), իսկ բյուզանդական գահին՝ Հուստինիանոս Բ-ն (685-695, 705-711), նրանք կնքեցին հաշտության պայմանագիր, որի՝ Հայաստանին և Վիրքին նվիրված հատվածում որոշվում էր, որ այդ երկրներից ստացվող հարկերը Խալիֆայության և Բյուզանդիայի միջև բաժանվելու էին հավասարապես¹: Սակայն շուտով բյուզանդական բանակը Լեոնտիոս զորավարի գլխավորությամբ ներխուժում է Հայաստան և ասպատակում երկիրը²: Այդ արշավանքին ի պատասխան 689թ. Հայաստան են ներխուժում արաբները, որոնց փորձում է դիմադրել Հայոց իշխան Աշոտ Բագրատունին (685-689), բայց տեղի ունեցած ճակատամարտում մահացու վերքեր է ստանում և շատ չանցած վախճանվում³: Այդ ժամանակ, արաբների հարաճուն սպառնալիքի պատճառով, ինչպես վկայում է Ասողիկը, «ոմանք ի Հայոց իշխանացն անձնատուրք եղեն առ զօրս Տաճկաց»: 689 թ. բյուզանդական զորքը կայսեր գլխավորությամբ կրկին արշավում է արևելք: Բյուզանդացիները գրավում են Հայաստանն ու Վիրքը: Հուստինիանոսը Հայոց իշխան է կարգում Ներսեհ Կամսարականին (689-693)⁴: Այնուհետև 692 թ. նա արշավանք է ձեռնարկում Խալիֆայության դեմ, բայց ծանր պարտություն է կրում⁵:

Բյուզանդական բանակի պարտությունը մեծապես նպաստեց արաբների կողմից Հայաստանի և այսրկովկասյան երկրների նվաճմանը: Հայոց իշխան Սմբատ Բագրատունին (693-726) երկիրն արյունահեղությունից փրկելու նպատակով 693 թ. հպատակություն հայտնեց այդ նույն թվականին Ջազիրայի (Վերին Միջագետք), Ատրպատականի, Հայաստանի և այսրկովկասյան երկրների կառավարիչ նշանակված Մուհամմադ իբն Մրվանին⁶: Ոստ Թեոփանեսի՝ Սմբատը, լսելով բյուզանդացիների պարտության լուրը, այդ թվականին «Հայաստանն արաբներին հանձնեց»⁷:

¹ Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Դ, քարգմ. քննադից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1983, էջ 74 (այսուհետև՝ **Թեոփանես Խոստովանող**):

² Տե՛ս «Պատմություն Անոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ա. Պետերբուրգ, 1887, էջ 17 (այսուհետև՝ **Անոնդ**), **Թեոփանես Խոստովանող**, էջ 75:

³ Տե՛ս **Անոնդ**, էջ 18:

⁴ Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան Պատմություն տիեզերական», հրատ. Ստ. Մալխասեանց, Ա. Պետերբուրգ, 1885, էջ 100-101:

⁵ Տե՛ս **Թեոփանես Խոստովանող**, էջ 78:

⁶ Տե՛ս **Ibn al-Asir**, *Al-gamil fi at-tarikh*, IV, Beirut, 1967, էջ 28:

⁷ **Թեոփանես Խոստովանող**, էջ 78:

Արաբների կողմից Հայաստանի և այսրկովկասի երկրների նվաճմանը նպաստեցին մաև գահակալական կռիվները Բյուզանդիայում: 695 թ. արքայովաճ Հուստին-նիանոս Բ-ի փոխարեն կայսր իռչակվեց Լեոնտիոսը, որը 698 թ. գահընկեց արվեց, և կայսրության գահին բազմեց ծովակալ Ապսիմարոսը՝ Տիրեբիոս Գ անունով⁸: Վերջինս փորձեց վճռական քայլեր ձեռնարկել Հայաստանում արաբական տիրապետության հաստատման դեմ: Այդ նպատակով մա 698 թ. գորք ուղարկեց Հայաստան, որը, սակայն, շուտով վերադարձավ Բյուզանդիա⁹:

Է դարի վերջին Աբդ ալ-Մալիք խալիֆան կարողացավ հաղթահարել Խալիֆայության ներքին երկպառակություններն ու ստեղծել կենտրոնաձիգ պետություն:

Արաբների կողմից Հայաստանի նվաճման մասին մանրամասն նկարագրություն է պահպանել Ղևոնդը: Պատմիչը հաղորդում է, որ «յետ ժգ ամի իշխանութեանն Աբդլ-Մելիքի՝ դարձեալ գրգռեալ սիրտն նորա ի շարասերն սատանայէ՝ և հրամայեաց զօրացն իւրոց ելանել ի վերայ աշխարհիս. որոց զօրագլուխ էր արինարբուն և այսակիրն Մահմետ (իմա՝ Մուհամմադ իբն Մրվանը - Ա.Ե.), որոյ դաշինս անօրէնութեան ուխտեալ առ իշխանին իւրեանց երդմամբ՝ շղարծուցանել զսուրն ի պատեանս մինչև ի մէջ աշխարհիս: Եւ գնացեալ խրոխտալով մինչև ի գաւառն Ջերմաձոր ելանէր, և զորս միանգամ գտանէր՝ սուր ի գործ արարեալ կոտորէր անխնայ ըստ խոստմանց իւրեանց: Բայց զի բազմաց ազդ եղեալ էր յառաջագոյն՝ զգուշացան յամբոցս բերլից ասպատանեալ: Առնոյր և բազում ամբոցս խաբութեամբ. քանզի պատիւր բանիւք կոչէր ի խաղաղութիւն: Եւ իբրև վստահացեալք իջանէին յամբոցացն՝ սուր ի գործ արարեալ կոտորէր զարսն և զկանայս, և զմանկունս վարէր ի գերութիւն. և տագնապ հասուցանէր աշխարհիս՝ մինչև երանել զմեռեալսն, որք խաղաղական հանգստեամբ յաշխարհէս փոխեցան, քան այնպիսի նեղութեամբք զկենդանութիւն կրելի»¹⁰: Այնուհետև Մուհամմադը նշանակեց արաբ կառավարիչ (ոստիկան) և հեռացավ Ասորիք¹¹:

Մովսէս Կաղանկատվացին հաղորդում է, որ «Ի ՃԽՁ երոյր թուականութեան Հայոց (իմա՝ 697թ. - Ա.Ե.) եկն Մահմետն Երկլորոյ ի Հայս. և աճապարեալ ընդ աշխարհն Աղուանից՝ մտանէ ի Չոր»¹²: Հայոց Արևելից կողմանց պատմիչը տեղեկացնում է, որ Մուհամմադի Չոր (իմա՝ Չորդա կամ Շորա պահակ) գնալուց հետո «ասպրտամբեալ Հայոց՝ արգելին զՏաճիկսն ի Դունի և ԿԲ հազարս ի Տաճկացն սպանին՝ աժեալ զօր բազում ի Հոռոմաց... Եւ դարձաւ Մահմետն ի Չորայ, զայ պաշարէ զՍևան ծովապատն բերդ ամս Գ, և ասպ առնու զայն և ի սուր սուսերի արկանէ, զորս գտանէ ի նմա. և անտի անցեալ ի Հայս եհար զՀոռոմստայն և զՀայն»¹³:

Հովհաննէս Դրասխանակերտցին տեղեկացնում է, որ «յայսմ վայրի Մրուան ոմն յիսմայէլեան տոհմէ ոստիկան ՚ի Հայս առաքեալ՝ մայտ ընդ բոլորից իսկ ամբոցաց Հայոց դնէր... Իսկ Սևան կղզի՝ որ ՚ի ծովակին Գեղամայ, թալտև յիսկըզբան նուազի անդ ոչ ըմբռնեցաւ ՚ի ձեռս նորա. սակայն զկնի երկեան մի ամաց մատնեցաւ ՚ի ձեռս նորա»¹⁴:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 80-82:

⁹ Տե՛ս Ղևոնդ, էջ 19:

¹⁰ Նույն տեղում, էջ 19-20:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 23:

¹² Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական քննազիւրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 317:

¹³ Նույն տեղում, էջ 317-318:

¹⁴ «Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Եր., 1996, էջ 96: Սկզբնաղբյուրների հաղորդումներից պարզվում է, որ Մուհամմադն ինչ-որ ձևով

Ըստ Թեոփանես Խոստովանողի՝ Լեոնտիոս կայսեր գահակալության երկրորդ տարում (իմա՝ 696/697 թ.) «ապստամբեց Լազիկայի (իմա՝ Եգերք - Ա.Ե.) Սերգիոս պատրիկը, Բարնուկիոսի որդին, և Լազիկան արաբներին հպատակեցրեց»¹⁵: Թեոփանեսի այս հաղորդումը ցույց է տալիս, որ ճիշտ է Մովսես Կաղանկատվացու այն տեղեկությունը, թե Մուհամմադ իբն Մրվանի արշավանքը սկսվել է 697 թ.:

Ըստ Իբն ալ-Ասիրի՝ Մուհամմադ իբն Մրվանը Հայաստանը նվաճեց հիջրայի 82 թ. (701-702 թ.)¹⁶ և այնտեղ կառավարիչ նշանակեց Աբու Շայխ իբն Աբդալլահին (701-703 թթ)¹⁷:

Խալիֆա իբն Խայյաթը հաղորդում է, թե Արմինիան նվաճվել է հիջրայի 81 թ. (700 թ. փետրվարի 26 - 701 թ. փետրվարի 14)¹⁸:

Ըստ Լեոյի՝ Մուհամմադ իբն Մրվանը Հայաստան է արշավել 696 թ. և երկրի նվաճումն ավարտել 700 թ.¹⁹:

Հ. Հարությունյանը կարծում է, որ Մուհամմադն արշավանքը սկսել է Մոկաց աշխարհի Ջերմածոր գավառից: Ուսումնասիրողը կարծիք է հայտնում, որ Հայաստանի նվաճումը տեղի է ունեցել 698-700 թթ.²⁰:

Ստ. Մելիք-Բախշյանը կարծում է, որ Մուհամմադ իբն Մրվանի արշավանքը տեղի է ունեցել 696-699 թթ.: Ըստ նրա՝ թեև Ղևոնդն այդ արշավանքը դնում է Աբդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության ԺՁ (16-րդ) տարում, այսինքն՝ 701 թ., ԺՁ թվականը Ղևոնդի երկում կարելի է սրբագրել Ժ-ի, որի դեպքում նրա հաղորդումը կհամապատասխանի Մովսես Կաղանկատվացու տեղեկությանը, թե արշավանքը սկսվել է 696 թ.²¹: Նշենք, սակայն, որ Ստ. Մելիք-Բախշյանն օգտվել է Հայոց Արևելից կողմանց պատմիչի երկի առանձին ձեռագրերի հիման վրա կատարված ու մասամբ թերի հրատարակությունից²², իսկ հնագույն և կարևոր ձեռագրերի բաղա-տությունը պատրաստված բնագրում Մուհամմադի արշավանքը թվագրված է 697 թվականով²³:

Մուհամմադի արշավանքը 696-699 թթ. է նշում նաև Վ. Իսկանյանը²⁴:

կարողացել է բաց թողնել Սևանա լճի ջրերը և դրանից հետո միայն գրավել Սևանա կղզին (տե՛ս «Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 85, «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ», Թիֆլիս, 1909, էջ 62):

¹⁵ Թեոփանես Խոստովանող, էջ 82:

¹⁶ Տե՛ս **И. Орбели**, Синхронистические таблицы хиджри и европейского летосчисления, М.-Л., 1961, էջ 33:

¹⁷ Տե՛ս **Ibn al-Asir**, IV, էջ 84, Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, թիվ 8, էջ 107, **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Ер., 1977, էջ 271:

¹⁸ Տե՛ս **Խալիֆա իբն Խայյաթ**, Տարիսի, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 2005, էջ 288:

¹⁹ Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Բ, Եր., 1967, էջ 324-325:

²⁰ Տե՛ս Հ. Հարությունյան, Հայաստանն Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ (640-856), Եր., 1946, էջ 36-38:

²¹ Տե՛ս **Ստ. Մելիք-Բախշյան**, Հայաստանը VII-IX դարերում, Եր., 1968, էջ 96-98:

²² Տե՛ս «Մովսեսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մ., 1860:

²³ **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 317:

²⁴ Տե՛ս **Վ. Իսկանյան**, Հայաստանը IV-VII դդ., Եր., 1991, էջ 519-520:

Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում է, որ մոտ 699 թ. Մուհամմադ Իբն Մրվանը մի շարք արշավանքներ է ձեռնարկում Հայաստան: Սևանա կղզում անրացած ապրտամբները երկու տարի համառ դիմադրություն են ցույց տալիս թշնամուն: Վերջապես Մուհամմադը ձեռնարկում է իր մեծ արշավանքը, որը տեղի է ունենում Աբդ ալ-Մալիքի իշխանության 16-րդ տարում, այսինքն՝ 701 թ.: Վերջին տեսակետն ուսումնասիրողը փորձում է հաստատել Իբն ալ-Ասիրի հաղորդմամբ, ըստ որի՝ Մուհամմադը Հայաստանը նվաճել է հիջրայի 82 թ. (701-702): Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ Մուհամմադը Հայաստան է արշավել Ջերմաձոր գավառով: Նվաճելով Հայաստանը և այսրկովկասյան երկրները՝ Մուհամմադը ձևավորեց Արմինիա ոստիկանությունը²⁵: Նա Ղևոնդի վերոհիշյալ հաղորդումը մեկնաբանում է այնպես, որ ստացվում է, թե Հայաստանը նվաճվել է Աբդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության 16-րդ տարում: Նույնիսկ պատմիչի՝ «յետ ժգ ամի իշխանութեանն Աբդլ-Մելիքի» տեղեկությունը գիտնականը սրբագրել է «ի վեցուսասներորդ ամի [իշխանութեանն Աբդլ-Մելիքի]»²⁶:

Արաբների կողմից Հայաստանի նվաճման 701 թ. ամրագրվել է ՀՍՄՀ ԳԱԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի երկրորդ հատորում²⁷:

Հայաստանի, ինչպես նաև այսրկովկասյան երկրների նվաճման 701 թվականն է ընդունվել նաև վրաց պատմագիտության կողմից²⁸:

Սակայն, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, Հայաստանի նվաճումը տեղի է ունեցել ոչ այնպես, ինչպես կարելի է եզրակացնել ուսումնասիրողների հայտնած տեսակետներից: Չնայած Լեոյի և Ստ. Մելիք-Բախչյանի տեսակետերը որոշ տեղերում համապատասխանում են սկզբնաղբյուրների հաղորդումներին, սակայն, կասկածելի է Ղևոնդի «[Մահմետ] գնացեալ խրոխտալով մինչև ի գաւառն Ջերմաձոր ելանէր» հաղորդման պարզաբանումն այնպես, ինչպես դա անում են որոշ ուսումնասիրողներ: Այդ արտահայտությունը նշանակում է «[Մահմետը] խրոխտալով գնաց հասավ մինչև Ջերմաձոր գավառը», և, մեր կարծիքով, ցույց է տալիս Ջերմաձոր գավառի՝ Մուհամմադի արշավանքի ոչ թե սկզբնական, ինչպես այդ հասկանում են Ա. Տեր-Ղևոնդյանը և Հ. Հարությունյանը, այլ վերջնական կետ լինելը: Այդ է ցույց տալիս Ղևոնդի հաղորդման տրամաբանությունը, քանի որ, ըստ պատմիչի, Ջերմաձորի ամրոցների գրավումով ու դրանցում

²⁵ Տե՛ս **Ա. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 73-74: Ա. Տեր-Ղևոնդյանն իր մեկ այլ աշխատության մեջ այլ կերպ է նկարագրում Հայաստանի նվաճումը (տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Հայաստանը VI-VIII դարերում, Եր., 1996, էջ 112-116):

²⁶ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, նշվ. աշխ., էջ 113:

²⁷ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Բ, Եր., 1984, էջ 326: Հայաստանի նվաճման թվականին անդրադարձել են նաև այլ ուսումնասիրողներ: Մ. Չամչյանը (տե՛ս «Պատմութիւն Հայոց», Բ. Վենետիկ, 1784, էջ 378) և Դ. Ինճիճյանը (տե՛ս «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Ա. Վենետիկ, 1835, էջ 445) Հայաստանի նվաճումն արաբների կողմից համարում են 694 թ., Ա. Մյուլլերը՝ 700 թ. (տե՛ս «История ислама», II, СПб., 1895, էջ 91), Մ. Օրմանյանը (տե՛ս «Ազգապատում», Ա. Պեյրոս, 1959, էջ 56), Բ. Առաքելյանը (տե՛ս «Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703թ.», ՀՍՄՀ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1941, թիվ 5-6, էջ 55-62) և Հ. Նալբանդյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 107) 698-700 թթ., Ժ. Լորանը՝ 698 թ. (տե՛ս «L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en (Nouvel édition revue et mise à jour par M. Canard)», Lisbonne, 1980, էջ 243), իսկ Ա. Ալպոյաճեանը՝ 685 թ. (տե՛ս «Պատմական Հայաստանի սահմանները», Կահիրե, 1950, էջ 61):

²⁸ Տե՛ս **Ա. Богверадзе**, Раннефеодальные Грузинские государства в VI-VIII вв., в. кн. «Очерки истории Грузии», т. II, Тбилиси, 1988, էջ 174:

ամրացած ապստամբների վերացնելով, ավարտվում է Հայաստանի նվաճումը: Բացի այդ, կարծում ենք, որ Մուհամմադի՝ հարավից արշավելու դեպքում, ապստամբների համար Մոկքում ամրանալը նպատակահարմար չէր լինելու, քանի որ այն դառնալու էր հարձակման առաջին քիրախը: Մինչդեռ, ապստամբության ժամանակ հայերը ստացել էին Բյուզանդիայի օգնությունն ու, անկասկած, հարավից արաբների արշավանքի դեպքում կգերադասեին ամրանալ Հայաստանի այն հատվածում, որտեղ բյուզանդական օգնության հնարավորությունն իրական կլիներ: Այդ պատճառով հայ ապստամբներն արաբական տիրապետության շրջանում հիմնականում ամրանում էին Հայաստանի հյուսիսարևմտյան շրջաններում²⁹: Ուստի՝ Մոկքում ապստամբների ամրանալը պետք է իր պատճառն ունենար:

Եթե սկզբնաղբյուրների վերոհիշյալ վկայությունների հիմամբ փորձենք պարզաբանել Մուհամմադի արշավանքը, կստանանք հետևյալ պատկերը: Հայոց ՃեՉ քվականին (697 թ.) արաբ զորավարը, մի խոշոր բանակի զլուխն անցած, ներխուժում է Հայաստան, նվաճում այն, Դվինում մեծաքիվ կայազոր թողնում և շարժվելով Աղվանքի կողմերը՝ մտնում է Չողա: Նույն ժամանակ՝ 697 թ., Եգեթքի Սերգիոս պատրիկը հպատակություն է հայտնում արաբներին: Իսկ Եգեթքի նվաճումն անհնար էր առանց Վիրքի նվաճման: Ամենայն հավանականությամբ, Մուհամմադ իբն Մովսեսը, 697 թ. ներխուժելով Հայաստան ու արշավելով Չողայի կողմերը, զորամասեր էր ուղարկել Վիրքը և Եգեթքը նվաճելու: Այդ զորախումբը նվաճել էր նաև Ափխազքը, քանի որ VIIդ. սկզբին, ըստ Թեոփանեսի, արաբները տիրում էին Աբազգիան (Ափխազք), Լագիկան (Եգեթք) և Իբերիան (Վիրք)³⁰: Մինչ Մուհամմադը զբաղված էր Չողայում, քիկունքում հայերն ապստամբում են և օգնության եկած բյուզանդական զորքի հետ երկիրը մաքրում արաբներից: Մեր համոզմամբ, խոսքը 698 թ. Տիրերիոս Գ-ի կողմից Հայաստան ուղարկված զորքի մասին է: Եթե ճիշտ է մեր եզրակացությունը, ապա արաբների դեմ ապստամբությունը սկսվել է 698 թ.: Մուհամմադը, վերադառնալով Չողայից, ճնշում է ապստամբությունը և վերանվաճում երկիրը: Դեսպի Չողա արշավելիս Մուհամմադը պաշարել ու փորձել էր գրավել Սևանա կղզին, բայց, չկարողանալով այն անմիջապես գրավել, թողել էր պաշարված Սևանա կղզին վերջիվերջո կարողանում է գրավել: Այնտեղ նա հաշվեհարդար է տեսնում հայ ապստամբների հետ: Ի դեպ, ճիշտ չէ Լեոյի այն պնդումը, թե Սևանա կղզում ամրացած ապստամբներն անձնատուր են եղել³¹: Ինչ վերաբերում է Սևանա կղզու պաշարման տևողությանը, ապա Հովհաննես Դրասխանակերտցու «զկնի երկեամ մի ամաց» («մի երկու տարի անց») արտահայտությունը հիմք չի տալիս այն հավասարեցնելու երկու տարվա, ինչպես այդ արել են Լեոն և Ա. Տեր-Ղևոնդյանը³², մանավանդ որ Մովսես Կաղանկատվացին, ինչպես տեսանք, պարզորոշ վկայում է, թե Մուհամմադը Սևանա կղզին պաշարել է երեք տարի: Ամենայն հավանականությամբ, Սևանա կղզու առումը տեղի է ունեցել 699 թ. (հաշվարկը կատարելով Մովսես Կաղանկատվացու նշած արշավանքի թվականից, որ է՝ 697 թ.)³³: Հայ ապստամբները՝ պարտություն կրելով, նահանջում են Հայաստանի հարավային

²⁹ Տե՛ս Ղևոնդ, էջ 122-123, 139-140:

³⁰ Տե՛ս Թեոփանես Խոստովանող, էջ 102:

³¹ Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 324-325:

³² Տե՛ս նույն տեղը, նաև՝ Ա. Տեր-Ղևոնդյան, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 113:

³³ Տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը Արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, «Գիտական ժողովածու»՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Եր., 1941, էջ 103:

ըրջաններ և ամրանում Մոկքի Ջերմածոր գավառում: Արդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության 16-րդ տարուց հետո («յետ ժգ ամի») և ոչ թե 16-րդ տարում, ինչպես ուսումնասիրողներն են հասկացել, Մուհամմադի կատարած արշավանքը ոչ թե ինչ-որ առանձին արշավանք է եղել, այլ դեռևս 697 թ. սկսած մեծ արշավանքի վերջաբանը և ուղղված է եղել Մոկքի Ջերմածոր գավառի լեռնային անառիկ ամբողջներում ամրացած ապստամբների դեմ: Ելք արդեն Սևանա կղզին գրաված Մուհամմադն արշավեց հարավ, «զնացեալ խորխտալով մինչև ի գաւառն Ջերմածոր ելանէր», խաբեությամբ գրավեց այնտեղի ամրոցներն ու ոչնչացրեց ապստամբներին, որով էլ ամբողջացրեց Հայաստանի և այսրկովկասյան երկրների նվաճումը:

Անդրադառնալով արաբների կողմից Հայաստանի նվաճման թվագրմանը՝ նշենք, որ երկնետն այստեղ Արդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության առաջին թվականի ճշգրտումն է, քանի որ Հայաստանի նվաճումն ավարտվել է նրա գահակալության 16-րդ տարուց հետո: Հայտնի է, որ նա խալիֆայության գահին է նստել հիջրայի 65 թ. և գահակալել մինչև հիջրայի 86 թ.³⁴: Գլխական գրականության մեջ նրա գահակալության համար հաճախ նշվում են 685-705 թթ.³⁵: Սակայն հիջրայի 65 թվականը ոչ թե 685-ն է, այլ 684-685 թվականը³⁶, այսինքն՝ իրականում Արդ ալ-Մալիքի գահակալությունը սկսվել է 684-ից և ավարտվել 705-ին: Այստեղից էլ ինքնըստինքյան բխում է այն եզրակացությունը, որ նրա գահակալության 16-րդ տարին ոչ թե 701-ն է, այլ 699/700 թվականը: Ի դեպ, 701 թ. կստանանք, եթե Արդ ալ-Մալիք խալիֆայի գահ բարձրանալու 685 թ., որը սխալ է, պարզապես գումարենք 16 տարի, իսկ ճշգրիտ հաշվարկի դեպքում կստացվի 700 թ.: Այսինքն՝ Հայաստանի նվաճման 701 թվականը հետևանք է ոչ ճիշտ հաշվարկի:

Այսպիսով, պարզելով, որ Արդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության 16-րդ տարին, որից հետո տեղի է ունեցել Հայաստանի նվաճումը, իրականում 699/700-ն է, նշենք, որ Հայաստանի նվաճման թվականը, ավելի ճիշտ՝ նվաճման ավարտի թվականը, պետք է լինի 700 թվականը: Այդ են ապացուցում Ղևոնդի հետագա վկայությունները: Պատմիչը հաղորդումներ է պահպանել Արդ ալ-Մալիք խալիֆայի օրոք տեղի ունեցած երկու իրադարձության մասին, որոնցից մեկը՝ Հայաստանի նվաճումը, ինչպես տեսանք, տեղի է ունեցել նրա գահակալության 16-րդ տարուց հետո, իսկ մյուսը՝ Մուհամմադի երկրորդ արշավանքը, 18-րդ տարում: Ըստ Ղևոնդի՝ այդ երկու իրադարձությունների միջև պետք է ընկած լինե՞ր երկու տարի: Հայաստանի նվաճումից երկու տարի հետո Մուհամմադը սկսեց յավեր նյութել սբ. Գրիգորի ուխտի դեմ: Սկսվում են նաև ժողովրդի նկատմամբ դաժան հարստահարություններ, և Մուհամմադը «զնայ անդէն բազում աւարաւ յԱսորեստան»: Այդ ամենի հետևանքով որոշ հայ նախարարներ Սմբատ Բագրատունու և Վարդ Ռշտունու գլխավորությամբ որոշում են հեռանալ Բյուզանդիա: Նրանց փորձում են կանգնեցնել արաբները, սակայն Վարդանակերտ ավանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտություն են կրում³⁷: Պատմիչը հաղորդում է, որ անմիջապես կրկին Հայաստան ուղարկվեց Մուհամմադ իբն Մովսեսը. «Մահմետ զօրավարն երկրորդ անգամ ելեալ յաշխարհս Հայոց զօրու ծանու յութութասաներորդ ամի Արդլ-Մելիք իշխանի

³⁴ St'u H.A.R. Gibb, Abd al-Malik b. Marwan, The Encyclopaedia of Islam, CD-ROM edition, v.1.0 © 1999 Koninklijke Brill NV, Leiden, The Netherlands, I:76a.

³⁵ St'u A. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 71, И. Фильштинский, История Арабов и Халифата (750-1517), М., 2006, էջ 36 և այլն:

³⁶ St'u И. Орбели, նշվ. աշխ., էջ 19:

³⁷ St'u Ղևոնդ, էջ 20-26:

և զամս գ հանդարտեալ դադարէր»³⁸: Աբդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության 18-րդ տարին 701/702 թ.-ն է: Ուստի, եթե 701/702 թ.-ից հետ զմանք երկու տարով, կատանանք Հայաստանի նվաճման թվականը՝ 699-700 թ.: Հենց այդ թվականն է ստացվում նաև, եթե Մովսես Կողանկատվացու հաղորդման հիման վրա հաշվարկում ենք Սևանա կղզու առումը և ապստամբության վերջնական ճնշումը: Ի դեպ, Խալիֆա իբն Խալլաբի հաղորդումն այն մասին, որ Արմինիան նվաճվել է հիջրայի 81 թ. (700 թ. փետրվարի 26 - 701 թ. փետրվարի 14), ևս խոսում է մեր տեսակետի օգտին:

Այսպիսով, Հայաստանի նվաճումն ավարտվել է 700 թ., որից երկու տարի անց՝ 702 թ., Մուհամմադ իբն Մրվանը կրկին արշավել է Հայաստան, քանի որ Վարդանակերտի ճակատամարտում հայ նախարարները պարտության էին մատնել արաբներին: Այստեղից էլ թիտում է, որ Վարդանակերտի ճակատամարտը տեղի է ունեցել ոչ թե 703 թ.³⁹, այլ 702 թ., որը, սակայն, այլ ուսումնասիրության խնդիր է:

Բացի այդ, Հայաստանի նվաճման մեր նշած 700 թ. օգտին են խոսում նաև այլ իրողություններ: Հայտնի է, որ հայ նախարարների ողջակիզումը տեղի է ունեցել Վալիդ խալիֆայի (705-715) գահակալության առաջին տարում, այսինքն՝ 705 թ.⁴⁰: Եթե հաշվարկենք Ա. Տեր-Ղևոնդյանի նշած և հայ պատմագրության մեջ ընդունված Հայաստանի նվաճման 701 թ.-ից, ապա դրան պետք է գումարենք այն երկու տարին, որ անցել էր Հայաստանի նվաճումից մինչև Մուհամմադ իբն Մրվանի կողմից սբ. Գրիգորի ուխտի դեմ սկսած դավերը, այնուհետև ևս երեք տարի, որոնց ընթացքում, ըստ Ղևոնդի, Մուհամմադը ճնշեց հայ նախարարների ապստամբությունը: Ողջակիզման թվականը կատացվի 706 թ., մինչդեռ ուսումնասիրողը նշել է 705⁴¹: Իսկ մեր հաշվարկի դեպքում, սկսելով 700 թ.-ից, ամեն ինչ ընկնում է իր տեղը: Ինչ վերաբերում է Իբն ալ-Ասիրի այն հաղորդմանը, ըստ որի՝ Մուհամմադը նվաճել է Հայաստանը 701-702 թ., որի վրա հենվում է Ա. Տեր-Ղևոնդյանը, ապա, մեր կարծիքով, թերևս խոսքը սբ. Գրիգորի ուխտի դեմ նյութած դավերի և հետագա հարստահարությունների մասին է:

Փորձենք պատասխանել ևս մեկ կարևոր հարցի: Եթե Ղևոնդը նկարագրում է 700 թ. իրադարձությունները, ինչո՞ւ է դրանք թվագրում «յետ ժգ ամի իշխանութեանն Աբդլ-Մելիքի», այլ ոչ թե ուղղակիորեն 700 թ.-ով: Ղևոնդի հաղորդման պատճառը, թերևս, Աբդ ալ-Մալիք խալիֆայի գահակալության 16-րդ տարում՝ 699 թ., տեղի ունեցած մի շատ կարևոր իրադարձությունն է, որը, դժբախտաբար, պատմիչը չի հիշատակում: Դատելով մեր քննությունից՝ 699 թ. արաբները գրավել էին Սևանա կղզին, որ ճակատագրական նշանակություն էր ունեցել ապստամբության համար: Ուստի, «յետ ժգ ամի իշխանութեանն Աբդլ-Մելիքի» ասելով՝ Ղևոնդը նկատի ունի այն, ինչ տեղի է ունեցել Սևանա կղզու գրավումից հետո:

Ամփոփելով քննության արդյունքները՝ արձանագրենք, որ արաբների արշավանքը Մուհամմադ իբն Մրվանի գլխավորությամբ դեպի Հայաստան սկսվել է 697 թ.: Արաբական զորքը ներխուժել է Հայաստան ու գրավել Դվինը: Այնտեղից Մուհամմադը զորամասեր է ուղարկել՝ նվաճելու Վիրքը, Եգեբքն ու Ափխազքը, իսկ

³⁸ Նույն տեղում, էջ 31: Այդ արշավանքը հիշատակում է նաև Իբն ալ-Ասիրը: Պատմիչի հաղորդմամբ Մուհամմադ իբն Մրվանը Հայաստան է արշավել Հայաստանի նվաճումից երկու տարի անց՝ հիջրայի 84 թ. (703-704) (տե՛ս Ibn al-Asir, IV, էջ 95):

³⁹ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Հայ ժողովրդի պայքարը Խալիֆայության լծի դեմ, «Հայ ժողովրդի պատմություն», Եր., 1984, հ. II, էջ 327:

⁴⁰ Տե՛ս Ղևոնդ, էջ 31:

⁴¹ Տե՛ս А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 78:

ինքն արշավել է Աղվանից կողմերն ու անցել Չողա: Այդ ժամանակ քիկունքում հայերն ապստամբել են և օգնության եկած բյուզանդական զորքի հետ միասին վերացրել երկրում գտնվող արաբական կայազորները: Մուհամմադը վերադարձել է ու վերանվաճել երկիրը: Նա սկզբնապես փորձել էր գրավել Սևանա կղզին, բայց չէր կարողացել և այն թողել էր պաշարված: Սևանա կղզին ընկել է երեք տարվա պաշարումից հետո՝ 699 թ.: Այդ ընթացքում արաբներն ավարտին են հասցրել Հայաստանի ու այսրկովկասյան երկրների նվաճումը: 700 թ. Մուհամմադն արշավել է Հայաստանի հարավային շրջաններ, որտեղ ամրացել էին հայ ապստամբների մնացորդները: Մուհամմադը, խաբեությանը իր մոտ հրավիրելով ու կոտորելով նրանց, վերջնականապես ճնշել է ապստամբությունը երկրում: Դրանից հետո Մուհամմադը կազմավորել է Արմինիա ոստիկանությունն ու այդ վարչական շրջանում կառավարիչ նշանակել Աբու Շայխ իբն Աբդալլահին:

А. С. ЕГИАЗАРЯН — О дате завоевания арабами Армении. — Важное значение имеет повторное изучение вопроса даты завоевания арабами Армении и Закавказских стран, поскольку мнения исследователей по этому вопросу часто не соответствуют сообщениям первоисточников.

В 697 г. арабское войско во главе с Мухаммадом ибн Мрваном вторглось в Армению и захватило Двин, откуда арабский полководец направился в Дербенд. В Армении после его ухода народ восстал и с помощью византийцев уничтожил арабские гарнизоны в стране. Мухаммад вернулся и подавил восстание. Во время похода в Дербенд он попытался захватить остров озера Севан, но безуспешно. Остров пал в 699 г., после трехлетней осады. После этого, в 700 г. Мухаммад двинулся на юг Армении, в область Джермадзор, где собрались последние силы восставших армян, и жестоким образом истребил их. В том же году он из Армении и Закавказских стран сформировал наместничество Арминия, назначив правителем Абу Шайх ибн Абдаллаха.